

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-11-5-Ա

ք. Երևան

14.11.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի նոյեմբերի 14-ի նիստում քննարկեց 2019 թվականի հոկտեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Անմո» ՓԲԸ (Երևան, Բաբաջանյան փ., շ. 77, բն. 16, AM) բողոքը (№20181701) «ARMENIAN BEAUTY» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ ենթակետերով և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված հիմքերով գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն բացառապես բաղկացած է «Armenian Beauty» գրառումից, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Հայկական գեղեցկություն», նշում է կոնկրետ ապրանքների հայկական ծագման և գեղեցիկ լինելու մասին և բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել առևտրային պրակտիկայում, այն է՝ «Beauty (Beautiful)» բառն, ըստ Քեմբրիջի բառարանի (Beauty=being Beautiful)

(https://dictionary.cambridge.org/dictionary/english/beauty?fbclid=IwAR313n0Ek5_kCuiH9uCNrbqsvoGpV49I3HzdRPNgcFuzw DsrBg4jf8FI8fo), նշանակում է գեղեցիկ, գեղեցկություն,

լինել գեղեցիկ, լինել հաճելի, գերագույն հաճույք պատճառող ինչ որ մեկը, կամ ինչ որ մի բանը, որը կարող է օգտագործվել ցանկացած մարդու, իրեր կամ իրավիճակ գովաբանելու համար, իսկ տվյալ պարագայում գեղեցկությունը վերաբերում է զարդերին՝ հայկական զարդերին, հետևաբար դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարելի ընձեռել որևէ անձի, նկատի ունենալով, որ առևտրային գործունեության ընթացքում բոլոր անձինք օրինաչափ ձևով կարող են օգտագործել այն: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ ենթակետերի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը բաղկացած է «Armenian Beauty» գրառումից, որն անգլերենից թարգմանաբար նշանակում է «Հայկական գեղեցկություն», նշում է կոնկրետ ապրանքների հայկական ծագման և գեղեցիկ լինելու մասին և բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք համընդհանուր են դարձել առևտրային պրակտիկայում: Հետևաբար դրա օգտագործման բացառիկ իրավունքը չի կարելի ընձեռել որևէ անձի, նկատի ունենալով, որ առևտրային գործունեության ընթացքում բոլոր անձինք օրինաչափ ձևով կարող են օգտագործել այն:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և պնդում էր բողոքում նշված իր հիմնավորումները:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ARMENIAN BEAUTY» (No20181701) ապրանքային նշանի գրանցումը

մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ